**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 29.10.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2020/236

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Փոթոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով բաց մրցույթ, դեղորայքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.10.2020թ.-ի թիվ 26/26-1/14934-2020 գրությամբ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 28.09.2020թ. թիվ 01/10-207 գրության հիման վրա, 03.10.2020թ.-ին «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 03.10.2020թ.-ին:

05.10.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/236 համարի ծածկագիրը:

15.10.2020թ.-ին և 30.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.10.2020թ.-ին:

2. **<u>«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 28.09.2020թ. թիվ 01/10-207 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2020թ. կարիքների համար կազմակերպվել է ՈՒԱԿ-ԲՄԱՊՅԲ-20/65 ծածկագրով դեղորայքի ձեռքբերման գնման ընթացակարգ:*

*24.08.2020թ-ի թիվ 6 արձանագրությամբ՝ 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Աբամա Թրեյդ» ՍՊՐ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից), 25.08.2020թ. Տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որտեղ անգործության ժամկետը սահմանվել է 10 օրացույցային օր: Անգործության ժամկետի ավարտից հետո՝ 09.09.2020թ.-ին Պատվիրատուն*

*պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Մասնակցին՝ կցելով պայմանագրի նախագիծը:*

*«Գնումների մասին» օրենքի 36 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն է, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Տվյալ դեպքում մինչև 24.09.2020թ-ն պայմանագիրը Մասնակցի կողմից հաստատված պետք է ներկայացվեր Պատվիրատուին, ինչը սահմանված ժամանակահատվածում չի կատարվել:*

*Ելնելով վերոգրյալից «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն զրկվում է 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր ստորագրելու իրավունքից:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 21.10.2020թ.-ի թիվ 01/10-232 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

*«ՍՅ-ԼՕ-2020/236 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2020թ. թիվ 4 արձանագրությունով 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից): «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Պավիրատուն պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Մասնակցին՝ կցելով պայմանագրի և ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ համաձայնագրի նախագծերը, ինչպես նաև բանկային երաշխիքի տեսքով՝ պայմանագրի և որակավորման ապահովումների օրինակելի ձևերը:*

*ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 10-րդ ենթակետը սահմանում է, որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝*

*փուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին՝*

*ա. նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են գնումների բազային միավորի փասնապատիկը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի ապահովումը, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ փուժանքի կամ կանխիկ փողի ձևով,*

*բ. նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա որակավորման ապահովումը հատկացված ֆինանսական միջոցների չափով ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, իսկ հետագայում պահանջվող ֆինանսական միջոցների մասով ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ փուժանքի կամ կանխիկ փողի ձևով.*

*Վերոգրյալից ակնհայտ է, որ Մասնակիցը պետք է պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացներ բանկային երաշխիքի տեսքով, քանի որ պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են գնումների բազային միավորի փասնապատիկը, տվյալ դեպքում՝ 17.530.000 (փասնյոթ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն): Մասնակիցի այն պնդումը, որ ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիր կնքելու ծանուցում չի ստացել, չի համապատասխանում իրականությանը, քանի որ պայմանագիրը համաձայնագրի հետ միասին իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակները, պայմանագրի և որակավորման ապահովումները փուժանքի ձևով, ինչպես նաև ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ համաձայնագիրը առանց բանկային երաշխիքի ներկայացրել է Պատվիրատուին:*

*Արդյունքում գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով 5-րդ արձանագրությունով որոշեց՝ գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, իսկ հրավերի 8.20 կետի համաձայն գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:*

*Այնուհետև «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն բողոք է ներկայացնում՝ անվավեր ճանաչել պատվիրատուի թիվ 5 արձանագրությունով գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը և պարտագրել պատվիրատուին 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքել «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի հետ, քանի որ*

*Պատվիրատուն ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո գնումների պլանում փոփոխություն չի կատարել:*

*Տվյալ պարագայում հարց է առաջանում, թե ինչու է բողոք ներկայացնում միայն 1-ին չափաբաժնի մասով, եթե 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ևս նա է ընտրված մասնակից ճանաչվել:*

*Վերոգրյալ բողոքի վերաբերյալ, բողոք քննող անձը որոշեց՝*

*«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 30.07.2020թ. ներկայացված բողոքը և համնման բողոքը բավարարել մասնակի.*

*1. Պարտավորեցնել ՈՒ-ԱԿ-ԲՄԱՊՅԲ-20/65 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 22.07.2020թ. թիվ 5 արձանագրությամբ գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին և 4-րդ ու 5-րդ չափաբաժինների մասով համապատասխանաբար «Վիգ Ֆարմ» ՍՊԸ-ին և «Գեղամ Կիրակոսյան» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումները:*

*2. Բողոքի և համանման բողոքի պահանջները՝ պարտավորեցնել պատվիրատուին 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքել «Աբամա Թ՛րեյդ» ՍՊԸ-ի հետ, մերժել:*

*Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 18.08.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/66 ծածկագրով որոշումը՝ 24.08.2020թ. թիվ 6 արձանագրությունով դադարեցնում է 22.07.2020թ. թիվ 5 արձանագրությամբ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին և 4-րդ ու 5-րդ չափաբաժինների մասով համապատասխանաբար «Վիգ Ֆարմ» ՍՊԸ-ին, «Գեղամ Կիրակոսյան» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումները և համապատասխանաբար չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչում «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին և տեղեկագրում հրապարակվում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որտեղ անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացույցային օր: Անգործության ժամկետի ավարտից հետո Պավիրատուն գնումների պլանում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո (ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ) պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Մասնակցին՝ կցելով պայմանագրի և ֆինանսկան միջոցներ նախատեսելու վերաբերյալ համաձայնագրի նախագծերը, ինչպես նաև բանկային երաշխիքի տեսքով պայմանագրի և որակավորման ապահովումների օրինակելի ձևերը, սակայն սահմանված ժամկետում պայմանագիր չի ներկայացվում Պատվիրատուին, արդյունքում գնահատող հանձնաժողովի 08.10.2020թ. թիվ 7 արձանագրությամբ գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով*

*հայտարարվում է չկայացած, իսկ 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակիցը:*

*«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի այն պատճառաբանությունը, որ պայմանագիր է ներկայացրել համաձայն 30.06.2020թ. ստացված ծանուցմանը, անհիմն է, քանի որ Մասնակցի կողմից հուլիս ամսին հաստատված պայմանագիրը չէր կարող Պատվիրատուի կողմից հաստատվեր հոկտեմբեր ամսին՝ խախտելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 13-րդ ենթակետի պահանջը, այն է՝*

*Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.*

*Մասնակիցը պայմանագիրը պետք է հաստատեր և ներկայացներ պատվիրատուին 09.09.2020թ. ծանուցումը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենի 36-րդ հոդվածի 3-րդ կետը:»:*

**3. <u>«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 05.10.2020թ.-ին գրությամբ դիմել է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.10.2020թ.-ի թիվ 26/26-1/14934-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում Մասնակիցը հայտնել է հետևյալը.

*««Վ. Ա. Ֆանարջյանի Անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով դեղորայքի մատակարարման բաց մրցույթ, որին մասնակցել է նաև «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն և համաձայն 15.06.2020թ-ի թիվ 4 արձանագրության (կից ներկայացնում ենք) 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:*

*Գնման գործընթացը իրականացվել է Գնումների մասին ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

*Սույն թվականի հունիսի 30-ին պատվիրատուն ներկայացրել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝*

*ՄԵՋԲԵՐՈՒՄ*

*«Կատարելով Գնումների մասին ՀՀ օրենքի 36 հոդվածի պանջները հայտնում ենք Ձեզ, որ Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում սույն ծանուցմանը կից պայմանագրի նախագծում նշված չափաբաժինների մասով հաղթող է ճանաչվել Ձեր կազմակերպությունը:*

*Ելնելով վերոգրյալից Ձեզ ենք ներկայացնում պայամանգրի նախագիծը և հայտնում ենք, որ հարկավոր է պայմանագիրը կնքել և կից գրությամբ ներկայացնել Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ:»:*

*էլեկտրոնային փոստի միջոցով մեզ ծանուցվել և առաջարկվել է կնքել միաւն պայմանագիր:*

*Կից ներկայացնում ենք պայմանագիր կնքելու առաջարկը:*

*«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ստորագրել է պայմանագիրը և ներկայացրել պատվիրատուն, ինչը պատվիրատուն հաստատել է իր թիվ 5 արձանագրությունով, կցում ենք:*

*Պատվիրատուն տվյալ փուլում իրավունք չուներ մեզանից պահանջել պայմանագրի և որակավորման ապահովումներ բանկային երաշխիկի տեսքով, քանի որ պատվիրատուն չէր ծանուցել համաձայնագիր կնքելու վերաբերյալ:*

*Սակայն 22.07.2020թ-ին Պատվիրատուն իր թիվ 5 արձանագրությունով (կից ներկայացնում ենք) ապօրինաբար զրկել է մեր կազմակերպությանը բոլոր 3 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու իրավունքից պատճառաբանելով, որ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագրի ապահովումը և որակավորման ապահովում և չի ստորագրել համաձայնագիրը:*

*Մինչդեռ պատվիրատուն մեզ չի ներկայացրել համաձայնագիր կնքելու առաջարկ:*

*Բացի այդ, պատվիրատուն ոչ 30.06.2020թ-ին, ոչ էլ բողոքի առարկա դարձած թիվ 5 արձանագրության հրապարակման պահին իրավունք չուներ ուղարկելու մեզ համաձայնագրի նախագիծ, քանի դեռ սահմանված կարգով չի կատարել փոփոխություն իր գնումների պլանում:*

*Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 18-րդ կետի*

*18. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն*

*սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում;*

*Քանի որ պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն չի կատարել իր գնումների պլանում, հետևաբար իրավունք չուներ նաև ուղարկելու մեզ համաձայնագրի նախագիծ:*

*Կից ներկայացնում ենք պատվիրատուի գնումների պանը, որտեղ հստակ երևում է, որ 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով դեռևս ֆինանսական միջոցներ նախատեսված չեն. Հետևաբար անգամ խոսք գնալ չէր կարող համաձայնագիր կնքելու վերաբերյալ:*

*Սույն փաստով մեր կազմակերպության կողմից ներկայացվեց բողոք ՀՀ ֆինանսների նախարարություն անվավեր համարել պատվիրատուի թիվ 5 արձանագրությունը, ինչը բավարարվել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից:*

*Վերաբերյալ Սեպտեմբերի 9-ի ծանուցմանը պայմանագիր կնքելու վերաբերյալ (ցանկանում եմ շեշտել՝ Պայմանագիր, այլ ոչ թե համաձայնագիր, քանի որ պատվիրատուն կրկին ներկայացրել է պայմանագիր կնքելու առաջարկ, ինչը նաև հաստատվում է պատվիրատուի ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկած գրությունով), ապա տեղեկացնում ենք, որ պայմանագիրը մեր կողմից կնքված և ներկայացված է պատվիրատուին համաձայն 2020թ-ի հունիսի 30-ին ներկայացված ծանուցմանը:»:*

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

**4. <u>ՍՑ-LO-2020/236 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 20.05.2020թ.-ին հայտարարվել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Ընթացակարգի հավելված 6-ով՝ ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է, որ Ապրանքի/ների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է՝ սույյն Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում…:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն:

iv. «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.06.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն:

vi. Հանձնաժողովի 22.07.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 15.06.2020թ.-ի թիվ 4 արձանագրությամբ՝ 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն, նույն օրը տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որտեղ անգործության ժամկետը սահմանվել է 10 օրացույցային օր: Անգործույթան ժամկետի ավարտից հետո 30.06.2020թ.-ի Պավիրատուն պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Մասնակցին կցելով պայմանագրի և ֆինանսկան միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագրի նախագծերը, ինչպես նաև բանկային երաշխիքի տեսքով՝ պայմանագրի և որակավորման ապահովումների օրինակելի ձևերը: Պայմանագրի և որոկավորման ապահովումներ բանկային երաշխիքի տեսքով ներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ Պայմանագրի գինը և Պայմանագրով նախատեսված ֆինասկան միջոցները գերազանցում են գնումների

բազային միավորի տասնապատիկը, այն է՝ 17.530.000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի և որոկավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով անհրաժեշտ էր ներկայացնել, ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը Մասնակցին ուղարկելու օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 21.07.2020թ.-ը: Սակայն պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով նշված ժամանակահատվածում չի ներկայացվել Պատվիրատուին:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին զրկել 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր ստորագրելու իրավունքից:

vii. Հանձնաժողովի 24.08.2020թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի 22.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրությամբ՝ 1-ին չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարվել էր չկայացած, իսկ 4-րդ ու 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից էր ճանաչվել համապատասխանաբար 2-րդ տեղը զբաղեցրած մասնակիցը: Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 18.08.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/66 ծածկագրով որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է դադարեցնել 22.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրությամբ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին և 4-րդ ու 5-րդ չափաբաժինների մասով համապատասխանաբար «Վիգ Ֆարմ» ՍՊԸ-ին և «Գեղամ Կիրակոսյան» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումները:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչել ընտրված/հաղթող մասնակից:

ix. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.09.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի abama.trade@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացվել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

x. Հանձնաժողովի 08.10.2020թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ 24.08.2020թ.-ի թիվ 6 արձանագրությամբ՝ 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն: Անգործության ժամկետի ավարտից հետո՝ 09.09.2020թ.-ին «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն ծանուցվել է պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն է, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի

ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Տվյալ դեպքում մինչև 24.09.2020թ.-ը պայմանագիրը Մասնակցի կողմից հաստատված պետք է ներկայացվեր Պատվիրատուին, ինչը սահմանված ժամանակահատվածում չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը որոշել է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն զրկել 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր ստորագրելու իրավունքից:

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.10.2020թ.-ի թիվ 26/26-1/14934-2020 գրությամբ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը

կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար

պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը՝ անհրաժեշտության դեպքում:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Օրենսդիրը, պայմանագրի և/կամ պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և/կամ որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: **Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:**

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 20.05.2020թ.-ին հայտարարված «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով, մի շարք չափաբաժինների մասով, հայտ ներկայացրած «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 15.06.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության հիման վրա ընթացակարգի 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Հանձնաժողովի 22.07.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 30.06.2020թ.-ի Պավիրատուն պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Մասնակցին կցելով պայմանագրի և ֆինանսկան միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագրի նախագծերը, ինչպես նաև բանկային երաշխիքի տեսքով՝ պայմանագրի և որակավորման ապահովումների օրինակելի ձևերը: Սակայն պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով նշված ժամանակահատվածում չի ներկայացվել Պատվիրատուին: Գնահատող հանձնաժողովը

որոշել է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն զրկել 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Հանձնաժողովի 24.08.2020թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 18.08.2020թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/66 ծածկագրով որոշումը, որոշել է դադարեցնել 22.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրությամբ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին և 4-րդ ու 5-րդ չափաբաժինների մասով համապատասխանաբար «Վիգ Ֆարմ» ՍՊԸ-ին և «Գեղամ Կիրակոսյան» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումները: Հանձնաժողովը որոշել է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչել ընտրված/հաղթող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.09.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի abama.trade@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացվել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի 08.10.2020թ.-ի նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ 09.09.2020թ.-ին «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն ծանուցվել է պայմանագիր կնքելու որոշման վերաբերյա, ինչը Մասնակցի կողմից սահմանված ժամանակահատվածում չի կատարվել: Գնահատող հանձնաժողովը որոշել է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն զրկել 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով սույն ընթացակարգի կողմերի ներկայացրած գրավոր դիրքորոշումներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալ հանգամանքները.

1. 30.06.2020թ.-ի Հանձնաժողովի քարտուղարը պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Մասնակցին կցելով պայմանագրի և ֆինանսկան միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագրի նախագծերը, ինչպես նաև բանկային երաշխիքի տեսքով՝ պայմանագրի և որակավորման ապահովումների օրինակելի ձևերը՝ հիմքը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 18.08.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/66 ծածկագրով և 21.08.2020թ. թիվ ՍՑ-ՆԳ-2020/164 որոշումները (դրանցով հաստատված հանգամանքները):

2. Մասնակիցը Հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.06.2020թ.-ին ուղարկված պայմանագիր կնքելու առաջարկի (ծանուցման) հիման վրա Պատվիրատուին է

ներկայացրել «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով ընթացակարգի պայմանագրի ստորագրված օրինակը:

3. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.09.2020թ.-ին Մասնակցին ուղարկված պայմանագիր կնքելու առաջարկի (ծանուցման) բովանդակության համաձայն՝

- մասնակցին է ներկայացվել պայմանագրի նախագիծը,
- նշվել է, որ հարկավոր է պայմանագիրը կնքել և կից գրությամբ ներկայացնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ,
- ծանուցմանը կից ներկայացվել է *«1. Աբամա Թրեյդ. rar»* ֆայլը:

4. Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից Բողոքներ քննող անձի էլ. հասցեին ուղարկված ծանուցումը չի նույնանում Մասնակցին ուղարկված ծանուցման հետ, դրանից հնարավոր չէ հաստատված համարել, որ Մասնակցին ուղարկվել է հենց նույն ծանուցումը, ինչն ուղարկվել է Բողոքներ քննող անձի էլ. հասցեին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին

հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ Պատվիրատուն 09.09.2020թ.-ին պահանջել (առաջարկել) է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ից ներկայացնել պայմանագրի ստորագրված տարբերակը, որն էլ Մասնակցի կողմից, արդեն իսկ նախորդ՝ 30.06.2020թ.-ի ծանուցման հիման վրա, ներկայացված է եղել, որպիսի պարագայում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

**Ո Ր Ո Շ Ե Ց**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.10.2020թ.-ի թիվ 26/26-1/14934-2020 գրությամբ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/236 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**